

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
հաշմանդամություն ունեցող անձանց
հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի
25.03.2014թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի ղեկավարությամբ:

Օրակարգ

1. Հաշմանդամություն ունեցող մարդկանց հավասար իրավունքների ապահովման, սոցիալ-հոգեբանական աջակցություն կազմակերպելու ուղղությամբ տարված աշխատանքների մասին

Զեկուցող՝ հանձնաժողովի անդամ, մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ Վ. Գևորգյան

Մասնակիցում էին հանձնաժողովի անդամներ՝

Գ. Դանիելյան—մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Պետրոսյան- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ/վարչության պետի փոխարինող/

Ս. Թադևոսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ /վարչության պետի փոխարինող/

Ա. Դավայան----- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ս. Զորյան--- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Վ. Գևորգյան--- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ:

Ա. Մովսիսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ
Ժ. Ավետիսյան-- „Արայի“ հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Հովհաննիսյան- „Ծիծեռնակ” հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Հրավիրվածներ՝

Ս. Այվազյան-ԿՈՒԱՄ հասարակական կազմակերպության նախագահ
Գ.Աղաբաբյան---Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց
Ա. Աբգարյան---<<Թալին հույս>> ՀԿ-ի նախագահ

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ պարոն Վ. Գևորգյանը:

2014թ. ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական հիմնախնդիրների, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ստեղծման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի կողմից իրականացվել են կարևոր միջոցառումներ: Մարզում հաշմանդամություն ունեցող անձիք առնչվում են զգալի դժվարությունների առողջապահական, կրթական և տնտեսական բնագավառներում:Նրանք մասնակցության համեմատաբար ցածր և աղքատության ավելի բարձր ցուցանիշներ ունեն: Հաշմանդամություն ունեցող անձիք հատկապես գյուղերում համապատասխան ինֆորմացիայի պակաս ունեն իրենց իրավունքների մասին և վարում են խիստ սահմանափակ կյանք:Մարզում հանրային օգտագործման բազմաթիվ շինություններ դեռևս չունեն թեքահարթաքներ, ինչը դժվարացնում է հաշմանդամների շփումը արտաքին աշխարհի հետ, թույլ չի տալիս զգալ իրենց հասարակության լիիրավ անդամ: Իրազեկման նպատակով մարզի 12 համայնքներում, առողջապահական կազմակերպվել են հաշմանդամություն ունեցող անձանց հետ հանդիպումներ:Այդ աշխատանքները կազմակերպվել են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Սոցիալական ապահովության բաժնի կողմից իրականացվում են բազմաբնույթ սոցիալական ծրագրեր հնարավորության սահմաններում աջակցելով մարզի տարածքում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկելու, ինտեգրելու գործընթացին: Պրոտեզաօրթոպեդիկ պարագաների ձեռքբերման նպատակով հաշվառվում են կարիքավորները: 28 անձի տրամադրվել են պրոտեզաօրթոպեդիկ, վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ: Հաշմանդամների զբաղվածության խթանմանն ուղղված 2 ծրագրեր են

իրականացվել՝ մասնագիտական ուսուցում, աշխատավարձի փոխհատուցում, աշխատատեղի հարմարեցում: 4 անձ ընդգրկվել է ակտիվ ծրագրերում և ապահովել է նրանց զբաղվածությունը: „Մանսուր” հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ 35 անձի սոցիալական աջակցություն է տրամադրվել՝ հագուստ, ռետինե կիսաճտքավոր կոշիկ, հողաթափ :

Ելույթներով , առաջարկություններով հանդես եկան Ա. Մովսիսյանը, Հ. Սեթոյանը, Ս.Թադևոսյանը,:

Քննարկումն ամփոփեց մարզպետ Ս.Սահակյանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ընդունվեց **որոշում՝**

1. Հանձնարարել

Մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնին՝

1. Հաշմանդամություն ունեցողների հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև փոխադարձ համագործակցության ապահովել:

2. Լրացուցիչ ուսումնասիրել սայլակների կարիք ունեցող անձանց տվյալները և զբաղվել նրանց բարձրացրած հարցերի լուծմամբ:

3. Պարզել աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց մասին տեղեկատվություն և նրանց մասնակից դարձնել Աշտարակի զբաղվածության գործակալության կողմից անցկացվող աշխատանքի տոնավաճառներին:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան